«Հայաստանի գինու ոլորտի զարգացման 2023-2032 թվականների ծրագիրը և դրանից բխող 2023-2032 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2023 թվականի N… -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023-2032 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2023-2032 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 9.4 «Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) **Հ**այաստանի գինու ոլորտի զարգացման 2023-2032 թվականների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի գինու ոլորտի զարգացման ծրագրից բխող 2023-2032 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ N 2 հավելվածով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ հաշվի առնելով ինչպես միջոցառումների առաջնահերթությունները, այնպես էլ հարկաբյուջետային սահմանափակումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

Երևան